ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ԿԱՏԱՐՎԱԾ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ԹՈՓՈՒԶՅԱՆ Ա. Օ.

մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՊՄՀ

ՊՈՂՈՍՅԱՆ Լ. Մ.

մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՊՄՀ

Հարմարավետ կրթական միջավայրի ստեղծումը կարևորագույն գործոններից է, որը նպաստում է երեխայի բնականոն զարգացմանն ու նրա՝ որպես հասարակության անդամ և քաղաքացի ձևավորմանը:

Կրթական միջավայրը մարդու սոցիալական աշխարհի անբաժանելի մասն է: Ուստի դպրոցը երեխայի համար պետք է լինի հարմարավետության կարևոր օբյեկտ: Այս առումով ուսուցիչների հիմնական նպատակներից մեկը աշակերտների զարգացման համար նպաստավոր միջավայրի ստեղծումն ու բոլորի համար հավասար ու հասանելի պայմանների ու հնարավորությունների ապահովումն է:

Ուսումնական միջավայրը պետք է օգնի բացահայտել սովորողի անհատական հետաքրքրությունները, հակումներն ու կարողությունները, զարգացնել այն հմտությունները, որոնք արդեն ի հայտ են եկել նրա հոգեկան տարբեր ոլորտներում (ֆիզիկական, հուզական, ճանաչողական, անձնական, հոգևոր, բարոյական): Դաստիարակության մեջ կրթական միջավայրի դերը գիտակցող ուսուցիչը մեծ նշանակություն է տալիս նրա դաստիարակչական ազդեցության ուժեղացմանը: Առաջադրված շատ հարցերում մասնակիցներին առաջարկվել է մի քանի տարբերակի ընտրություն:

Սովորողների համար կրթական միջավայրի ստեղծման, դրա դժվարությունների ու խոչընդոտների, կրթական միջավայրի առկա պայմանների բացահայտման նպատակով իրականացվել է ուսումնասիրություն, որին մասնակցել են 379 ուսուցիչ: Նրանցից 46, 9%՝ տարրական դպրոցի ուսուցիչներ, 43, 6 %՝ միջին, 9, 5%՝ ավագ դպրոցի ուսուցիչներ են:

Առաջին փակ հարցին՝ **«Ինչո՞վ եք համոզված, որ Ձեր աշակերտներին հաճելի է Ձեզ հետ շփվելը»**, որից ուսուցիչները ունեին ընտրելու իրենց կարծիքին համարժեք առնվազն երկու պատասխան-տարբերակներ, ուսուցիչները նշել են հետևյալ պատասխանները.

- 53, 1 %՝ նրանք դասամիջոցին հավաքվում են իմ շուրջ,
- 23, 5 %՝ իրենց բոլոր միջոցառումներին ինձ մասնակից են դարձնում,
- 41, 9 %՝ դպրոցից դուրս պատահական հանդիպելիս ինձ հետ զրույցի են

բռնվում,

- 70, 9%՝ ինձ հետ հաճախակի են քննարկում իրենց առօրյա խնդիրները,
- 9, 5 %՝ այլ պատասխաններ:



Ուսուցիչների մեծ մասը ընտրել է «Ինձ հետ քննարկում են իրենց առօրյա խնդիրները» պատասխանը: Այս պատասխանը ցույց է տալիս, որ ուսուցիչները կարևորում են իրենց դերը աշակերտների կյանքի կարևոր հարցերին մասնակից դառնալու ու նրանց օգնության հասնելու գործում: Հաջորդ միտքը, որն ընտրել են ուսուցիչների մեծ մասը՝ «նրանք դասամիջոցին հավաքվում են իմ շուրջ»-ն է: Այս արտահայտության կարևորումը ևս խոսում է այն մասին, որ ուսուցիչները գնահատում են աշակերտների հետ շփումն ու նրանց կողմից գնահատված լինելը: Ընդհանուր առմամբ այս հարցի պատասխանները գոհացուցիչ են:

Հաջորդ՝ **«Տրված պատասխան- տարբերակներից նշե՛ք կրթական հարմարավետ միջավայրի մի քանի պայման, որոնք պիտի ապահովի ուսուցիչը»** հարցին ուսուցիչները ընտրել են հետևյալ պաասխանները.

- 23, 5 %՝ հետաքրքրվել աշակերտների կյանքով, մասնակցել նրա առօրյային,
- 62, 6%՝ ապրումակցել յուրաքանչյուր երեխայի՝ աջակցելով հաղթահարելու ցանկացած խնդիր,
- 15, 1%՝ աշակերտների գործունեությունը գնահատել <<այստեղ և հիմա>> սկզբունքով,
- 76, 5 %՝ ապահովել ազատ արտահայտվելու, ինքնադրսևորվելու հնարավորությունները,
- 77, 7%՝ կարևորել, գնահատել և հաշվի առնել աշակերտի կարծիքը,
- 52%՝ կատարել դիտումներ աշակերտների առանձնահատկությունները վերհանելու նպատակով,
- 1, 7 %՝ այլ պատասխան:



Այս հարցի պատասխանները, որոնք ընտրել են ուսուցիչները ևս գոհացուցիչ են, խոսում են այն մասին, որ նրանք գիտեք, թե որոնք են աշակերտների համար բարենպաստ կրթական միջավայր ստեղծելու պայմանները։

«Նշե՛ք կրթական հարմարավետ միջավայրի ապահովման 2-3 դժվարություն» պահանջին ուսուցիչները արձագանքել են հետևյալ կերպ։

Նրանց.

- 52, 5 %՝ ուսուցչի ժամանակի սղությունը,
- 35, 8 %՝ դպրոցում անբարենպաստ միջավայրի առկայությունը,
- 15, 1 %՝ կրթական հարմարավետ միջավայրի ստեղծման մասին անբավարար իրազեկվածությունը,
- 16,8 %՝ ժամանակակից աշակերտների հետ համագործակցելու պատրաստակամության բացակայությունը,
- 27,4 %՝ մանկավարժական գործընթացում, աշակերտների անհատական առանձնահատկությունների բացահայտման ու դրանց հաշվառման անտեսումը,
- 34, 6 %՝ ակտիվ կրթական գործընթացի մեջ բոլոր աշակերտների ներգրավման անհնարինությունը,
- 26, 8 %՝ դասարանում դրական բարոյահոգեբանական մթնոլորտի ստեղծման դժվարությունը,
- 8, 9 %՝ այլ պատասխան։



Այս հարցի պատասխաններով պարզել ենք, թե ինչ դժվարություններ են ունենում ուսուցիչները արդյունավետ կրթական միջավայր ստեղծելու համար: Պատասխաններից երևում է, որ ամենաշատը նրանց խանգարում է ժամանակի սղությունը, դպրոցի ընդհանուր անբարենպաստ մթնոլորտը, դժվարությունները աշակերտներին ակտիվ գործունեության մեջ ներգրավելու ընթացքում, ուսուցիչների համար բարդ է նաև դասարանում դրական մթնոլորտ ստեղծելը:

«Ինպե՞ս եք որոշում, որ աշակերտները Ձեզ հարգում են» հարցին ուսուցիչների պաասխանները դասավորվել են հետևյալ կերպ: «ՀՀարմարավետ են զգում իրենց դասարանում» պատասխանը ընտրել է նրանց 43 %, 48, 6%–ը նշել է «հաշվի է առնում իմ կարծիքը» , «համագործակցում է ինձ հետ» պատասխանը նշել է 67, 6 %–ը, «ակտիվ մասնակցում է դասագործընթացին» պատասխանը նշել է 54, 2– %ը, այլ կարծիք են արտահայտել հարցվածների 5, 6 %–ը:



Որպես հարգանքի դրսևորում ուսուցիչների մեծ տոկոսը իրավամբ նշել է աշակերտների իրենց հետ պատրաստակամությունը, չեն անտեսել նաև այլ կարևոր արտահայտություն «ակտիվ մասնակցում են դասագործընթացին», որը ուսուցչին հարգելու կարևոր ցուցիչ է: Սակայն անտեսել են իրենց կարծիքը հաշվի առնելու, իրենց հետ խորհրդակցելու, և այլ հարցեր:Սա նշանակում է , որ ուսուցչի նկատմամբ վստահությունը դեռևս ցածր է:

«Դուք հարգանքով ե՞ք վերաբերվում յուրաքանչյուր աշակերտի անձին՝ անկախ իրավիճակից» հարցին ուսուցիչների 88, 3%–ը պատասխանել է «այո», 9, 5 %–ը պատասխանել է «երբեմն չի ստացվում», 2, 2%–ը նշել է , որ դժվարանում է պատասխանել։



Ինչպես երևում է պաասխաններից, ուսուցիչների մեծ տոկոսը հարգանքով է վերաբերվում երեխաներին, սակայն, անգամ այն փոքր տոկոսը, որ նշել է, որ երբեմն չի ստացվում և դժվարանում է պատասխանել, արդեն մտահոգիչ է։

Վերջին հարցով առաջարկել ենք ուսուցիչներին ընտրել այն արտահայությունները, որոնք իրենք կկիրառեին իրենց պրակտիկ գործունեության ընթացքում։ ստորև տրվում են դրանք՝ ուսուցիչների կողմից ընտրված պատասխանների հետ միասին.

- «Ես անընդհատ աշխատում եմ իմ մասնագիտական գիտելիքների կատարելագործման ուղղությամբ» պատասխանն ընտրել է ուսուցիչների 78, 8 %–ը։
- «Ես փորձում եմ ուսուցման գործընթացում հաշվի առնել երեխայի անձնական փորձը»՝22, 3 %–ը։
- «Ես հաշվի եմ առնում մանկավարժական գործընթացում երեխայի հետաքրքրությունները» պատասխանն ընտրել է ուսուցիչների 41, 9 %–ը։
- «Ես նպաստում եմ աշակերտների նախաձեռնողականության ձևավորմանը» պատասխանը ընտրել է 45, 8 %–ը։
- «Ես համագործակցում եմ ծնողների հետ երեխայի դաստիարակության արդյունավետության գործընթացը բարձրացնելու նպատակով» 46, 9 %–ը։
- «Ես նպաստում եմ աշակերտների ինքնուրույնության ձևավորմանը» պատասխանը՝ 46, 9%–ը։
- «Ես ստեղծում եմ պայմաններ աշակերտների ազատ արտահայտման համար» 69, 8 %–ը։



Պատասխաններից երևում է, որ ուսուցիչների մեծ մասը գիտի և գիտակցում է այն պայմանների կարևորությունը, որոնք ստեղծում են արդյունավետ կրթական միջավայր: Ուրախալի է, որ ուսուցիչները կարևորում են մասնագիտական գիտելիքների կատարելագործումը , երեխայի դաստիարակության գործում ծնողների հետ համագործակցելը, երեխաների նախաձեռնողականության, ինքնուրույնության, ազատ արտահայտման համար պայմանների ստեղծումը:Միաժամանկ անհրաժեշտ է նշել, որ ուսուցիչների ընտրած արտահայությունները, ցույց են տալիս, որ նրանց կեսից ավելին դեռևս չի գիտակցում, որ նշված բոլոր հարցադրումները վաղուց արդեն պետք է դարձած լինեին իրենց պրակտիկ գործունեության առարկա:

Այսպիսով՝ բազմաթիվ հետազոտություններ մշտապես շեշտել են, որ շրջակա միջավայրն ազդում է մարդու զարգացման և վարքի վրա: Շրջակա միջավայրի ընկալումն իրականացվում է նրա հետ մշտական փոխգործակցության գործընթացում, որտեղ մարդը հանդես է գալիս որպես իրավիճակի անբաժանելի մաս, իսկ մարդկային զարգացումը ոչ այլ ինչ է, քան անհատականության ձևավորում և կայացում՝ մարդկության պատմության ակտիվ և գիտակից արարում: Սովորողի զարգացումը տարբեր արտաքին և ներքին գործոնների ազդեցության արդյունք է:Մանկավարժության համար այդ գործոններից առանցքայինը՝ ուսուցչի անձն է, ով էականորեն ազդում է դպրոցականների անհատականության զարգացման վրա՝ նրան դարձնելով երեխայի անձի կայացման համահեղինակ: Ակնհայտ է, որ ուսուցչի ֆիզիկական և հոգեբանական բարեկեցությունը անհրաժեշտ պայման է, այլապես ավելորդ է խոսել իր կողմից ստեղծվելիք հնարավոր բարենպաստ միջավայրի ստեղծման կարողության մասին:ՈՒրեմն առաջնային և առանցքային պայմանը ուսուցչի հարմարավետության ապահովումն է դպրոցում, որը ելնելով ուսուցիչների հարցումներին տրված պատասխաններից դեռևս ապահովված չէ:

Հայտնի է, որ կրթական միջավայրը ձևավորվում է ինչպես դասի, այնպես էլ սովորողի

արտադասարանական, արտադպրոցական գործունեության մեջ, ուստի Կրթական միջավայրի ստեղծման նպատակներն ու խնդիրները մարմնավորվում են ոչ միայն դասի, այլև արտադասարանական գործունեության մեջ: Նման գործունեությունը կազմակերպվում է ըստ անձի զարգացման ուղղությունների: Դասերի բովանդակությունը պետք է ընտրվի՝ հաշվի առնելով սովորողների ցանկությունները, հետաքրքրություններն ու պահանջմունքները, երեխայի ընդունակությունները:

Արտադասարանական գործունեությունը կարող է ներառել աջակցություն պահանջող երեխաների հետ անհատական պարապմունքների, երեխաների անհատական և խմբային խորհրդատվությունների, տարբեր ձևերի էքսկուրսիաների, բանավեճերի, դպրոցական գիտական ընկերությունների, օլիմպիադաների, մրցույթների և շատ այլ միջոցառումների կազմակերպման գործընթացներ, որոնք նպաստում են երեխաների զարգացմանը և ձևավորմանը:

Հարմարավետ կրթական միջավայրի ստեղծումը ենթադրում է հետևյալ հոգեբանական, մանկավարժական և կազմակերպչական պայմանների իրականացում, որոնցից են.

- առաջատար մանկավարժական փորձի ներդնում,
- յուրաքանչյուր երեխայի անհատական հատկանիշների հաշվառում ու զարգացում,
- դպրոցի ներսում ուսուցչի պրոֆեսիոնալիզմի բարձրացման համակարգի ստեղծում,
- աշակերտակենտրոն մանկավարժական գործընթացի կազմակերպում և այլն:

Սա նշանակում է, որ դասարանում հանգիստ, բարենպաստ մթնոլորտ ստեղծելու համար ուսուցիչը պետք է հավատա յուրաքանչյուր երեխայի զարգացման հնարավորությանն ու ուժերին: Այսինքն՝ չկան լավ կամ վատ երեխաներ, կան երեխաներ, որոնք հասարակության ու դպրոցի ավելի մեծ ուշադրության կարիքն ունեն: ՈՒսուցչի ողջ վարպետությունը կայանում է նրանում, որ նա կարողանա ուսուցման գործընթացը, դասը, արտադասարանական աշխատանքը կառուցել այնպես, որ բոլոր երեխաները՝ և՛ ուժեղ, և՛ թույլ, իրենց հարմարավետ ու անվտանգ զգան դասարանում և յուրաքանչյուրը գտնի իր հետաքրքրությունների և հարցադրումների պատասխանները:Դրա համար, մանավանդ տարրական դպրոցում , հարմարավետ կրթական միջավայրի ձևավորման գործում կարևորվում է աշակերտներին **սովորել սովորեցնելու գաղափարի** իրականացումը:Ամեն ինչ կախված է ուսուցչի կոմպետենցիաներից. որքանով է նա կարողանում կրթական միջավայրը անվտանգ ու հարմարավետ դարձնել յուրաքանչյուր երեխայի համար, որքանով է գիտակցում իր դերը՝ ուսումը երեխաների համար մատչելի, սիրելի և հետաքրքիր դարձնելու, նրանց սովորելու

ցանկությունը մշտապես վառ պահելու և բորբոքելու գործում: Որքանով են նրա հմտությունները բավարարում ՏՀՏ-ը մանկավարժականացնելուն , սովորողների մեդիագրագիտությունը զարգացնելու և մեդիատեխնոլոգիաները դասագործընթացում և դրանից դուրս օգտագործելուն, որքանով է նա ընդունակ խթանել երեխաների ինքնուրույնությունը, նախաձեռնողականությունն ու ստեղծագործականությունը:

Որքանով է նա արժևորում ու հաշվի առնում երեխաների կարծիքն ու ձայնը, նրանց մասնակցությունը իրենց կյանքին վերաբերող հարցերի վերաբերյալ որոշումներ ընդունելիս, և վերջապես որքանով է ուսուցիչը դավանում երեխայի և մանկության բարձրարժեքության գաղափարին և իր անձնային որակներով համապատասխանում հումանիստական մանկավարժության սկզբունքներին:

Ծնողների շրջանում իրականացրած ուսումնասիրության արդյունքները

Հաջորդ փուլում հարցումներն իրականացվել են ծոնղների շրջանում, քանի որ ծնողները կրթական միջավայրի ձևավորման գործընթացի սուբյեկտներ են: Նրանց կարծիքը երեխայի համար կրթական միջավայրի հարմարավետության վերաբերյալ չափազանց կարևոր է՝ իրավիճակը պատկերացնելու, հիմնախնդիրը սահմանելու և առկա խոչընդոտներին ու մարտահրավերներին լուծումներ գտնելու համատեքստում: Այդ նպատակով հետազոտություն է իրականցվել 124 ծնողի շրջանում, որի արդյունքները ներկայացնում ենք ստորև:

Առաջին՝ «Ձեր երեխայի դպրոցում արդյո՞ք ստեղծված են հարմարավետ պայմաններ նրա ընդունակությունների զարգացման համար» հարցին ծնողների 54% պատասխանել է «մասամբ», «այո» պատասխանել է 47 ծնող /37, 9%/, 9 ծնող /7, 3% -–ը/ պատասխանել է «ոչ»:



Ինչպես տեսնում ենք առաջին հարցի պատասխաններից, ծնողների մեծ մասը դժգոհ է դպրոցում ստեղծված միջավայրից, պայմաններից:

Երկրորդ հարցի միջոցով փորձել ենք պարզել, թե դպրոցը որքանով է երեխային պատրաստում ինքնուրույն կյանքի: Հարցին, թե «Ըստ Ձեզ, դպրոցում սովորողներին նախապատրաստում ե՞ն ինքնուրույն գործունեությանը կյանքում» ծնողների շուրջ 42 %–ը

պատասխանել է «մասամբ», 31, 5 %–ը նշել է, որ դպրոցում կարևորվում է միայն ուսումնական առարկաների բովանդակության իմացությունը, ծնողների 25 % –ը պատասխանել է «այո», իսկ 1, 6 % /124 ծնողից 2-ը/ կարծում են, որ դա ընտանիքի գործն է և դպրոցն այս հարցում անելիք չունի:



Ինչպես տեսնում ենք, ծնողների մոտեցումները այս հարցի վերաբերյալ չափազանց տարբեր են: Անգամ կան ծնողներ, ում կարծիքով երեխային ինքնուրույն կյանքին նախապատրաստելու մեջ դպրոցը չպետք է մասնակցի: Անհանգստացնող է այն փաստը , որ ծնողների մեծ մասը պատասխանել է, որ դպրոցում շեշտը դրվում է միայն ուսումնական առարկաների բովանդակության իմացության վրա: Փաստորեն, անտեսվում է երեխայի արժեհամակարգի, անձնային այնպիսի որակների ձևավորման խնդիրը, որը հնարավորություն կտա նրան ինքնաիրացվել:

Երրորդ՝ «Գնահատեք դպրոցի պայմանների հարմարավետությունը Ձեր երեխայի համար» հարցին, ծնողների մեծ մասը, մոտ 77%–ը նշել է, որ հիմնականում հարմարավետ է, 7%–ը տվել է դրական պատասխան՝ «հարմարավետ է»: Սակայն մյուս ծնողների պատասխաններում նկատվում է անհագստություն և դժգոհություն, մոտ 5%–ը գրել է, որ «երեխան իրեն դպրոցում լավ չի զգում», իսկ 9%–ի կարծիքով դպրոցը բացարձակ «հարմարավետ չէ»:



«Երեխան ամբողջովին ներգրավված է՞ ուսումնական և արտաուսումնական գործունեության մեջ» հարցին ծնողների 55, 6 %–ը նշել է «այո, շատ ակտիվ ներգրավված է» պատասխանը, 39, 5 %–ը՝ «մասամբ է ներգրավված», իսկ մոտ 5 %–ը՝ նշել է «ներգրավված չէ»

պատասխանը:



Փաստորեն, ըստ ծնողների պատասխանների՝ դպրոցում երեխաների կեսից ավելին ընդգրկված է ուսումնական և արտաուսումնական գործունեության մեջ: Սակայն անհանգստացնող է այն երևույթը, որ երեխաների մյուս կեսը՝ 44տոկոսը մասամբ, կամ ընդհանրապես ներգրավված չեն այդ գործընթացում: Դրա պատճառները կարող են տարբեր լինել: Սակայն սա արդեն ահազանգ է այն մասին, որ կա խնդիր, որի պատճառով երեխաների **կեսը** լիարժեք ընդգրկված չէ ուսումնական գործունեության մեջ: Խնդիր, որը անկասկած, բացասական ազդեցություն է ունենալու երեխայի կրթական մակարդակի, նրա զարգացման ու կայացման, դաստիարակության ու սոցիալիզացիայի վրա: Աշակերտներին ուսումնական և արտաուսումնական գործունեության մեջ ներգրավելը՝ ուսուցչի գործառույթն է: Երեխայի՝ ուսումնական և արտաուսումնական գործունեության մեջ ոչ լիարժեք ներգրավումը կրթական միջավայրի անբավարար պայմանների առկայության ցուցանիշ է: Դա նշանակում է, որ սովորողը ուսուցման գործընթացի սուբյեկտ չէ, որ ուսումնառության գործընթացը չի համապատասխանում իր հետաքրքրություններին, հակումներին ու պահանջմունքներին, հետևապես, ուսման մոտիվացիան նրա մոտ շատ ցածր է: Այս պատասխաններից կարող ենք եզրակացնել նաև, որ ուսուցիչը և նրա կողմից ստեղծված կրթական միջավայրը և ընդհանուր առմամբ, դասավանդման գործընթացը չեն նպաստել երեխաների մեջ ուսման նկատմամբ, դասավանդվող առարկաների նկատմամբ հետաքրքրություն և շահագրգռվածություն առաջացնելուն: Դպրոցում ստեղծված չէ այն մթնոլորտը, որը վարակում ու ստիպում է երեխային ներգրավվել ուսումնական և արտաուսումնական գործունեության մեջ: Այս վիճակը կարող է նաև հետագայում հիմք դառնալ համադասարանցիներից երեխայի օտարացման:

Հաջորդ հարցի պատասխանները ևս հետաքրքիր են: «Գնահատե՛ք Ձեր երեխայի ամենօրյա ծանրաբեռնվածության մակարդակը» հարցին ծնողների 41, 1%–ը նշել է

«չափազանց ծանրաբեռնված է», 29, 7 %–ը նշել է «ծանրաբեռնվածությունը մեծ չէ, ամեն ինչ հասցնում է» պատասխանը, 26%–ը պատասխանել է, որ երեխան միջին ծանրաբեռնվածություն ունի, միայն 3, 2 %–ն է նշել, որ ընդհանրապես ծանրաբեռնված չէ:



Իհարկե, երեխայի ծանրաբեռնվածության մակարդակը կախված է ինչպես դպրոցական ծրագրերի հագեցվածությունից, այնպես էլ ուսուցչի կողմից տրվող առաջադրանքների քանակից: Դրանց հաշվառումը դպրոցի մանկավարժական գործընթացում բավականին բարդ, սակայն պարտադիր պահանջ է առողջ կրթական միջավայր ստեղծելու համար: Շատ բան կախված է ուսուցչի վարպետությունից, նրանից, թե նա որքանով է հաշվի առնում դասին ներկայացվող վալեոլոգիական պահանջները, սովորողների հնարավորությունները, ընդունակությունները, աշխատանքի տեմպը, ուսումնական գործունեությունը երեխայի համար հաճելի, հասանելի, հետաքրքիր դարձնելու հանգամանքը: Սա ժամանակակից դպրոցի հիմնախնդիրներից մեկն է:

Հաջորդ հարցի պատասխանները դասավորվել են հետևյալ կերպ: «Նշե՛ք փոփոխությունները, որոնք նկատել եք երեխայի գործունեության և տրամադրության մեջ (կարող եք նշել 2-3 պատասխան)» հարցին ծնողների մոտ 21%-ը նշել է «դարձել է դյուրագրգիռ» պատասխանը, «դարձել է անտարբեր» պատասխանը նշել են 17, 7%, սակայն ծնողների 41, 1% նշել է «սկսել է ավելի շատ հետաքրքրվել արտաուսումնական գործունեությամբ», նաև «դարձել է ըմբոստ և խռովկան» պատասխանել է ծնողների 24, 2%, «հաճախ է բողոքում դպրոցից և ուսուցիչներից» պատասխանել են 22, 6%, այլ պատասխաններ են նշել մոտ 13, 7 %-ը, հիմնականում կրկին բացասական:

Պետք է շեշտենք, որ բացասական երանգներով են պատասխանել հիմնականում միջին դպրոցական տարիքի երեխաներ ունեցող ծնողները: Դրանից կարելի է եզրակացնել, որ երեխան միջին դպրոցական տարիքում՝ ճգնաժամային տարիքային փուլում, հաճախակի բազմաթիվ դժգոհություններ է ունենում, որը արտահայտում է տարբեր դրսևորումներով:

Կրթական միջավայրը այս տարիքային խմբի համար հարմարեցնելը, նրանց համար պայմաններ ստեղծելը, որպեսզի միջին դպրոցականին օգնեն հաղթահարել ճգնաժամը, բոլոր մանկավարժների, ծնողների գերխնդիրն է: Սակայն փորձը ցույց է տալիս, որ հենց այս տարիքում են հիմնականում մեծահասակները երեխային թողնում միայնակ իր խնդիրների հետ՝ ժամանակի սղության, անբավարար գիտելիքների պատճառով չեն կարողանում նրան օգնել, աջակցել:

7-րդ հարցի միջոցով, որը ձևակերպված էր «Ըստ Ձեզ, ուսուցիչները բարյացակամ ե՞ն Ձեր երեխայի նկատմամբ» փորձել ենք պարզել, ուսուցիչների վերաբերմունքը աշակերտների նկատմամբ՝ ծնողների աչքերով:

Ծնողների 52%-ը դրական պատասխան է տվել, նշելով «շատ բարյացակամ» պատասխանը, «շատ հանդուրժող են» նշել ծնողների 22, 2 %-ը: Կան նաև բացասական պատասխաններ: Ծնողների 7, 3 %-ը նշել է «շատ են նկատողություն անում երեխային, նրանց մոտեցումը ճիշտ չէ», 13, 5%-ը այլ պատասխանների հատվածում հիմնականում դժգոհել են ուսուցիչների վերաբերմունքից, նշելով, որ նրանք չեն հասկանում երեխաներին, չեն կարողանում համագործակցել, անընդհատ բղավում են և վիրավորում երեխաներին:

8-րդ՝ «Ծանոթ ե՞ք դպրոցի տնօրինության հետ» հարցի միջոցով մենք փորձել ենք պարզել, թե որքանով է ամուր ծնողների կապը դպրոցի հետ, մասնավորապես տնօրինության հետ:

Այս հարցի պատասխանները բաժանվել են հետևյալ կերպ: 79 %-ը նշել է, որ ծանոթ է, 16, 9 %-ը՝ «ոչ բոլորին» պատասխանը, իսկ 4 %-ը՝ «ոչ» պատասխանն է նշել:



Հաջորդ հարցը, որը լրացնում է մեր հետաքրքրությունների շրջանակը և կապված է նախորդի հետ՝ «Հաճախ ե՞ք դպրոց գնում և ի՞նչ առիթով» ապացուցեց, որ ծնողների կապը դպրոցի հետ շատ թույլ է: Նրանց մեծ մասը նշել է, որ գնում է դպրոց միայն ծնողական ժողովների ժամանակ, շատ հազվադեպ՝ անհրաժեշտության դեպքում:



Մենք նաև խնդրել էինք ծնողներին գրել դպրոցի կրթական միջավայրը երեխայի կարիքներին համապատասխանեցնելու առաջարկություններ: Նշենք դրանք խմբավորված ձևով՝ առանց խմբագրման:

- Իմ երեխան սովորում է 2-րդ դասարանում, կցանկանամ ծնողների համար ավելի հաճախ կազմակերպվեն **սեմինարներ, քննարկումներ** դասվարների կողմից, որոնք կուղղորդեն մեզ երեխաների հետ ավելի շատ աշխատելուն, որ ունենանք ստեղծագործ, նպատակասլաց և իհարկե տրամաբանական մտածողության տեր երեխաներ: Մի խոսքով ուսուցիչներին պետք է սովորեցնեն ծնողների հետ աշխատելու ձևեր:
- Դպրոցի նյութատեխնիկական բազան նորացման ու հարստացման կարիք ունի, ժամանակակից դպրոցի պահանջներին չի համապատասխանում կրթական ֆիզիկական միջավայրը:
- Ավելի ուշադիր պետք է լինել երեխաների հոգեկան առողջության, հույզերի արտահայտման նկատմամբ, դպրոցում բացառել երեխաներին պիտակավորելը, դրանք կօգնեն դպրոցի հանդեպ մոտիվացիա ձևավորելուն:
- Կուզեի դասերին, հաղորդվող գիտելիքներին ավելի գործնական ուղղվածություն տարվեր:
- Առավել աշխատանք է անհրաժեշտ կատարել երեխաների դաստիարակության գծով: Այսօր դաստիրակությունը գրեթե անտեսված է և շատ դժվար է ունենալ միաժամանակ կիրթ ու դաստիարակված մարդ: Միայն կրթելը, առանց դաստիարակելու, ապարդյուն է:
- Դպրոցի շենքային պայմանները արդիական չեն, մասնավորապես, դպրոցի գրադարաններում ընթերցանության, համակարգչով աշխատելու հնարավորություն չկա, ֆիզկուլտուրայի դասերից հետո պահանջվող հիգիենիկ պայմանները բացակայում են, ոչ բոլոր դպրոցներն են հարմարեցված ԿԱՊԿՈՒ երեխաներ ընդունելուն, մինչդեռ ասում են, որ պետք է գնանք համընդհանուր ներառականության:
- Կարծում եմ պետք է նոր կառուցվող մասնաշենքերը գոնե լինեն ժամանակակից:

Դպրոցը միայն շենքը չէ, անհրաժեշտ է ուսուցիչներին էլ նոր մանկավարժական գիտելիքներով զինել, հորդորել լինել ավելի համբերատար և հանդուրժող:

- Արդար, օբյեկտիվ, բաց գնահատումն ու հավասար, առողջ մրցակցությունը միայն սովորելու հանդեպ հետաքրքրություն կառաջացնեն, ուսուցիչների կողմից սյուբեկտիվ գնահատականները սպանում են երեխաների մեջ արդարության հանդեպ հավատը/ մանավանդ տարրական դասարանում): Դրա հետևանքով կրթական միջավայրը դառնում է անբարենպաստ:
- Պետք է երեխային ընդունել, որպես անհատ այնպիսին, ինչպիսին որ կա: Եվ մենք, ծնողներս, և հատկապես ուսուցիչները, պետք է պահպանեն երեխայի անհատականությունն ու ինքնատիպությունը, երեխաները հաճույքով պետք է հաճախեն դպրոց:
- Վերանայել ուսումնական ծրագրերի ծանրաբեռնվածությունը: Տնային աշխատանքներ հանձնարարելիս էլ հիշել, որ երեխան մեկն է, իսկ ուսուցիչները մի քանիսը, և բոլորն էլ տնային աշխատանք են տալիս: Քովիդը մեծ վնաս հասցրեց դպրոցին, օնլայն ուսուցման որակն էլ դեռ պարզ չէ, բայց ակնհայտ է, որ արտադասարանական աշխատանքը ձախողվեց: Պետք է մտածել արտադասարանական աշխատանքը վերականգնելու մասին: խմբակներ բացել հենց դպրոցում, ավելի հաճախ կազմակերպել ինտելեկտուալ խաղեր:
- Ակնհայտ է, որ օնլայն դասավանդումը թերություններ ունի: Սակայն դասերը կոնսպեկտավորելու պահանջը, միայն գիտելիքի վրա հենվելը ավելի խտացնում այդ վիճակը: Գուցե պետք է ուրիշ առաջադրանքներ տրվեն, որոնք գիտելիքը պրակտիկայում օգտագործելուն նպաստեն:
- Առաջարկում եմ ուսուցումը կազմակերպել փորձարարական և խաղային մեթոդներով, հաշվի առնելով ներկա ժամանակների մարտահրավերները՝ շեշտը դնելով ապագա պահանջատեր և իրազեկված քաղաքացի դաստիարակելու վրա, կյանքի պրակտիկ հմտություններ ձևավորելու վրա:
- Կցանկանամ դպրոցական միջավայրը դառնա զարգացնող: Չմոռանանք լաբորատորիաների դերը այդ գործում:Պետք է ապահովել դասերի գործնականությունը՝ անկախ համավարակից:
- Ուսուցչական կազմի թարմացում է անհրաժեշտ և համերաշխ մանկավարժական կոլեկտիվներ են պետք: Թե չէ ինչի նման է, ամեն ուսուցիչ իր պահանջներն է թելադրում, միասնություն չկա, ավելին, ուսուցիչը կարող է բամբասել իր կոլեգայից, այն էլ երեխաների մոտ: Այդ դպրոցում որտեղից էլ կլինի դրական միջավայր:

- Փոխել դասագրքերն ու գիտելիքի ստուգման ձևերը: Ուշադրություն դարձնել ՏՀՏ-ների կիրառմանը , որպեսզի երեխաները հասկանան, որ համակարգիչը առաջին հերթին գիտելիք փնտրել-գտնելու, սովորելու համար է:
- Օնլայն դասապրոցեսը կազմակերպել հարց ու պատասխանի միջոցով՝ ներգրավելով բոլոր աշակերտներին:
- Ուսուցիչներին խնդրենք, որ մոռանան իրենց տան հոգսերը և մի քիչ ժպտան երեխաներին և ձևից անցնեն բովանդակության:
- Դպրոցի միջավայրի հարմարավետության համար շատ կարևոր է երեխաների նկատմամբ ուսուցիչների վերաբերմունքը: Նրանք շատ շուտ են զգում և հասկանում թե որ ուսուցիչն է իրենց անմնացորդ և անշահախնդիր սիրում և նվիրված իր գործին:

Այսպիսով՝ծնողների կողմից անցկացված հարցախույզը ցույց տվեց, որ նրանք հնարավորինս ներգրավված են/մանավանդ տարրական դպրոցում / դպրոցի մանկավարժական գործընթացում և մտահոգված են վերջինիս խնդիրներով ու որակով:

Այսօրվա դժվարին պայմաններում ընտանիքը դպրոցի համակարգված և որակյալ օգնության կարիքն ունի: Հարցումները հավաստում են, որ ծնողները զգում են դրա կարիքը և կարծես թե գիտակցում են, որ միայն ուսուցիչների հետ համագործակցելը կօգնի հաջողությամբ լուծել իրենց երեխաների կրթական խնդիրները և կապահովի նրանց համար բարենպաստ կրթական միջավայր: Երեխայի կրթական հաջողությունները դպրոցում մեծապես կախված են նաև նրանից, թե ծնողները որքան են կարողանում ժամանակ տրամադրել, օգնել , աջակցել երեխային, որքանով են տանը հարմարություններ և ընտանեկան նպաստավոր, ջերմ միջավայր ստեղծել նրանց ուսումնառության, ազատ ժամանակի կազմակերպման, հոգեկան ու ֆիզիկական առողջության պահպանման համար: Որքանով են կրթությունը, դաստիարակությունը, ուսումն ու գիտելիքը տվյալ ընտանիքում արժեք , որքանով է երեխայի մասնակցությունը և ձայնը լսելի ընտանիքում՝ իր կյանքին վերաբերող խնդիրների լուծմանն ու համապատասխան որոշումների ընդունման գործում: Որքանով են ծնողները գիտակցում , որ իրենց օրինակը երեխաների համար լռելյայն ընդօրինակման օբյեկտ է և իրենք ստիպված են նրանց ներկայությամբ սթափ և հավաքված լինել: Իհարկե, այս բոլոր հարցերում ընտանիքի առաջին և շատ դեպքերում միակ օգնականը ուսուցիչն է, ով կարող է ծնողին գիտելիքներ հաղորդել և օգնել երեխաների համար ընտանեկան ջերմ մթնոլորտ ստեղծելու գործում:

Համագործակցությունը միակողմանի չի լինում: Ծնողն էլ շատ հարցերում կարող է դպրոցին, ուսուցչին սատարել: Ավելին, ծնողներին կրթական միջավայրի ստեղծմանը ակտիվ մասնակից դարձնելը դպրոցի հիմնական խնդիրներից պետք է լինի: Ծնողների

գործունեությունը պետք է ուղղված լինի նրանց ակտիվ ներգրավմանը կրթական միջավայրի ստեղծման, արտադասարանական աշխատանքի և ազատ ժամանակի կազմակերպման, երեխաների և ուսուցիչների համագործակցության խորացման, երեխաների մասնագիտական կողմնորոշման և այլ հարցերում:

Ծնողները պետք է համոզված լինեն, որ իրենց մասնակցությունը դպրոցական կյանքին կարևոր է ոչ թե այն պատճառով, որ ուսուցիչը դա է ցանկանում, այլ այն պատճառով, որ դա կարևոր է հենց երեխայի համար: Անշուշտ, այս դեպքում էլ ուսուցիչը պիտի կարողանա գտնել այն գործը, որը կապահովի տվյալ ծնողի մասնակցությունը դպրոցական կյանքին և կրթական միջավայրի ձևավորմանը: Հետևաբար, ընտանիք-դպրոց, ուսուցիչ-ծնող համագործակցությունն անխուսափելի է, դա արվում է հանուն երեխայի զարգացման և կայացման:

Աշակերտների շրջանում իրականացված հետազոտության արդյունքները

Դպրոցական միջավայրը աշակերտի զարգացման կարևոր գործոններից մեկն է: Կրթական միջավայրի ստեղծման հիմնական պատասխանատուն ուսուցիչն է, ծնողի հետ միասին: Նրանք իրենց սոցիալական, մասնագիտական և անձնական դիրքորոշումներով կարող են ապահովել անհրաժեշտ պայմաններ աշակերտների զարգացման համար:

Աշակերտների վրա դպրոցի կրթական միջավայրի ազդեցության բացահայտման նպատակով իրականացրել ենք ուսումնասիրություն, որին մասնակցել են հանրապետության տարբեր տարածքներից և տարբեր տարիքի 607 աշակերտներ/ տարրական, միջին և ավագ դպրոցական տարիքի/:

Առաջին՝ «Դպրոցի միջավայրը ինձ համար շատ հարմարավետ է: Ես սիրում եմ սովորել» հարցին աշակերտների 66, 6 % -ը պատասխանել է «այո, դա այդպես է», «ոչ, դա այդքան էլ այդպես չէ» պատասխանել է աշակերտների 8, 7 % -ը, 22, 4 % -ը նշել է, որ «ավելի շատ այդպես է, քան հակառակը»:



Ընդհանուր առմամբ կարող ենք նշել, որ այս հարցի պատասխանները գոհացուցիչ են: Սակայն ստացվում է, որ երեխաների համարյա կեսը իրեն լավ չի զգում դպրոցում, որը իրապես մտահոգիչ է: Աշակերտների հիմնական պարտականությունը սովորելն է: Աշակերտների շրջանում սովորելու նկատմամբ սեր առաջացնելը, համապատասխան մոտիվացիա առաջացնելը , սովորելու նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելու համար համապատասխան պայմաններ ստեղծելը ուսուցչի գործն է՝ ծնողի հետ միասին: : Դա է աշակերտի արդյունավետ սովորելու գրավականը:

Հաջորդ հարցին՝ «Ի՞նչ ես զգում դասընկերներիդ հետ շփվելիս» աշակերտների պատասխանները դասավորվել են հետևյալ կերպ.

- 64, 1 % -ը՝ վստահություն,
- 56, 2 % -ը՝ ապահովություն,
- 15, 7 % -ը ՝ ոչինչ,
- 8, 2 % -ը ՝ անհանգստություն,
- 5, 1 % -ը՝ անտարբերություն,
- 67, 4 % -ը ՝ ուրախություն



Ինչպես երևում է գծապատկերից, դրական պատասխանները գերիշխում են: Երեխաները հիմնականում նշել են ուրախության, վստահության, ապահովության զգացմունքները: Սակայն , աշակերտների մոտ 30 տոկոսը «անհանգստություն», «անտարբերություն» կամ «ոչինչ» չի զգում, այսինքն օտարացած է դպրոցից, որն իհարկե խիստ անհագստացնող իրավիճակ է: Այս պատասխանները խոսում են այն մասին, որ ոչ բոլոր աշակերտների համար է կրթական միջավայրը հարմարավետ, ոչ բոլորն են իրենց լավ զգում դասարանում, ոչ բոլորի զարգացման համար են հավասար և մատչելի հնարավորություններ ու պայմաններ ստեղծված: Սրա անմիջական պատասխանատուն մանկավարժներն են, ովքեր պեք է նկատեն այս երևույթներն ու աշխատեն դրանց շտկման ուղղությամբ:

Հաջորդ՝ «Ես հնարավորություն ունեմ ազատ արտահայտել իմ կարծիքը»

արտահայտությանը աշակերտները պատասխանել են հետևյալ կերպ.

- 58, 6 % -ը՝ այո, դա այդպես է,
- 16, 8 % -ը՝ ոչ, դա այնքան էլ այդպես չէ,
- 19, 9 % -ը՝ ավելի շատ այդպես է, քան հակառակը,
- 4, 6 % -ը ՝ ոչ , դա այդպես չէ



Ինչպես երևում է պատասխաններից, աշակերտների մեծ մասը դասարանում հնարավորություն ունի ազատ արտահայելու իր կարծիքը: Սակայն մտահոգիչ է այն, որ աշակերտների 20 տոկոսը դասարանում կաշկանդված է , վախենում է իր կարծիքն ասել: Կարծում ենք դա այն բանի հետևանքն է, որ երեխաները վստահ չեն, որ իրենց կարծիքը լսելի կլինի, հետևապես ավելորդ են համարում այն բարձրաձայնել, կամ իրենց անվտանգ չեն զգում և վախենում են պիտակավորվելուց կամ ծաղրի ենթարկվելուց, կամ օտարացած են կոլեկտիվից և հարկ չեն համարում կարծիք արտահայտել՝որն ամենավտանգավորրն է:

Հաջորդ արտահայտության միջոցով մենք փորձել ենք պարզել, թե արդյոք աշակերտները բարդություններ ունենում են համադասարանցիների հետ շփվելիս, թե ո՛չ: Եվ **«Ես բարդություններ եմ ունենում համադասարանցիներիս հետ շփվելու ընթացքում»** արտահայտությանը աշակերտների միայն 56, 8 % -ը նշել է «ոչ, դա այդպես չէ» պատասխանը, 26, 7 % -ը նշել է «ոչ, դա այնքան էլ այդպես չէ» արտահայությունը, իսկ 8, 9 % -ը նշել է՝ «այո, դա այդպես է» պատասխանը, 7, 1 % -ը նշել է «ավելի շատ այդպես է, քան ոչ» պատասխանը:



Այսինքն, աշակերտների մեծ մասը նշել է, որ խնդիրներ չունի համադասարացիների հետ շփվելիս: Հետաքրքիրն այն է, որ հարցաթերթիկները վերլուծելիս մենք նկատեցինք, որ համադասարանցիների հետ խնդիրներ ունեցող աշակերտները միջին դպրոցական տարիքում են: Այս տարիքում /ճգնաժամային տարիքային փուլում/, աշակերտների միջև անհամաձայնություններ են առաջանում, որը մանկավարժական հետևողական աշխատանքի, ուղղորդման և կարգավորման կարիք է զգում: Դա պայմանավորված է հիմնականում այդ տարիքի հոգեբանամանկավարժական առանձնահատկություններով և կարևոր է արձանագրել, որ այլ մասնագետների ներգրավումը գործընթացում /հոգեբաններ, սոցիալական մանկավարժներ/ ևս շատ կարևոր է:

Շատ հետաքրքիր էին հաջորդ հարցի պատասխանները , որտեղ պահանջվում էր ընդգծել բոլոր այն պատասխան–տարբերակները, որոնք աշակերտները կցանկանային, որ իրենց ուսուցիչները իրականացնեին իրենց հետ հարաբերություններում:

- 36, 2 % -ը նշել է՝ ուշադիր լսել աշակերտին և արձագանքել,
- 34, 1 % -ը՝ ուրախանալ /տխրել/աշակերտի հետ միասին,
- 45, 3 % -ը՝ հաշվի առնել աշակերտի կարծիքը,
- 37, 7 % -ը՝ հարգանքով վերաբերվել աշակերտին,
- 33, 1 % -ը՝ աշակերտին տալ ազատ արտահայտվելու հնարավորություն,
- 68, 1 % -ը՝ հետաքրքրվել իմ կյանքով:



Այս հարցի պատասխանները խոսում են այն մասին, թե ինչն են կարևորում աշակերտները մանկավարժների հե շփման ընթացքում, ինչն են արժևորում: Լավ կլիներ, որ այսպիսի հարցումներ իրականացվեին հենց ուսուցիչների կողմից, որպեսզի նրանք պարզեին , թե ինչ են սպասելիքներ են ակնկալում իրենցից աշակերտները: Ինչպես երևում է պաասխաններից, նրանց ամենամեծ ցանկությունն է, որ մանկավարժները հետաքրքրվեն իրենց կյանքով, հաշվի առնեն իրենց կարծիքները և այլն:

Հաջորդիվ, աշակերտներին առաջարկել ենք 1-ից 5 թվանշանների սահմանում գնահատել ուսուցիչների հետ ունեցած հարաբերությունները: Աշակերտների 41, 7 % -ն է միայն 5 գնահատել իրենց հարաբերությունները ուսուցիչների հետ: Պետք է նշենք, որ այդ գնահատականն էլ դրել են, հիմնականում, 4-րդ դասարանցիները: Աշակերտների 35, 6 % -ը նշել է 4 գնահատականը, 15 % -ը՝ 3 գնահատականն է տվել, իսկ 4, 3 % -ը՝ նշել է 2 , 3, 5 % - էլ 1 թվանիշը:



Մտահոգիչ է այն փաստը, որ աշակերտների մոտ 23 տոկոսը ուսուցիչների հետ իրենց հարաբերությունները գնահատել է բավարար և անբավարար: Նորից պետք է շեշտենք, որ դրանց հեղինակները միջին դասարանների աշակերտներն են: Հաստատվում է մեր այն

վարկածը, որ աշակերտները այս տարիքային փուլում իրենց ուսուցիչների հետ համագործակցության, հաղորդակցման, հարաբերությունների կառուցման խնդիր ունեն, որը լուրջ մասնագիտական աշխատանքի պահանջ է առաջացնում: Ուստի այս արդյունքների ներկայացումն ու քննարկումը մանկավարժական համույթի հետ՝ կարևորագույն խնդիր է:

«Դպրոցում իմ ունեցած ամենափոքր հաջողությունը նկատվում և ոգևորվում է ուսուցիչների և ծնողների կողմից» արտահայտությանը աշակերտների 62, 5 %-ը պատասխանել է «այո, դա այդպես է» 17, 6 % -ը նշել է «ավելի շատ այդպես է, քան ոչ» 14, 1 % -ը նշել է «ոչ, դա այդքան էլ այդպես չէ», 5, 8 % -ը՝ ասել է «ոչ, դա այդպես չէ»:



Աշակերտների մեծ մասը դրական պատասխան է տվել այս պնդմանը, սակայն 20 տոկոսը ունի այլ կարծիք, ինչը խորհելու տեղիք է տալիս: Փաստորեն, աշակերտների այդ խումբը իրեն անտեսված է զգում, որովհետև նրանց հաջողությունները մեծահասակների կողմից չեն նկատվում, ինչը, կարող է հանգեցնել հետագայում գործելու մոտիվացիայի նվազմանը, ընդհանրապես ակտիվ գործունեություն ծավալելու ցանկության նվազմանը, որը մեծապես կդանդաղեցնի երեխայի զարգացման գործընթացը:

«Ես վստահ եմ, որ իմ անհաջողությունների դեպքում ուսուցիչները կաջակցեն և կապրումակցեն ինձ /կհասկանան/» արտահայտությանը աշակերտները արձագանքել են հետևյալ կերպ: «Այո, դա այդպես է» նշել է հարցվածների 59%-ը, «ավելի շատ այդպես է, քան ոչ» նշել է հարցվածների 21, 7 %-ը, 12, 5 %-ը նշել է «ոչ, դա այդքան էլ այդպես չէ» արտահայտությունը, ցավալի է, որ աշակերտների 6, 8 %-ը նշել է «ոչ, դա այդպես չէ» արտահայտությունը:



Պատասխաններից պարզ երևում է, որ աշակերտների 20 տոկոսը աջակցման և ապրումակցման կարիք ունեն: Այս աշակերտները իրենց հարմարավետ չեն զգում դպրոցական միջավայրում, սակայն այդ խնդիրը, ինչպես երևում է պատասխաններից, անտեսված է ուսուցիչների կողմից: Ուստի բավականին մտահոգիչ և վտանգավոր փաստ են արձանագրել երեխաները, վտանգավոր, որովհետև այս իրավիճակը կարող է դառնալ ուսուցչից, դպրոցից երեխայի օտարացման, մեծահասակների հասարակության նկատմամբ անվստահության պատճառ:

Ուրախալի է, որ «Ես համարում եմ ինձ դասարանի մի մասնիկը, շատ հարմարավետ եմ ինձ զգում դասարանում» արտահայտությանը հարցվածների 73, 3 %-ը նշել են « այո, դա այդպես է» արտահայտությունը, սակայն դրա կողքին կան այլ պատասխաններ ևս: Օրինակ 9, 4 %-ը նշել է «ոչ, դա այնքան էլ այդպես չէ», 4, 6 %-ը՝ ոչ, դա այդպես չէ և 12, 7 %-ը՝ «ավելի շատ այդպես է, քան հակառակը»:



Այս հարցի պատասխանները որոշակիորեն հակասում են նախորդ հարցերին տված պատասխաններին, սակայն ուրախալի է, որ աշակերտների մեծ մասը համարում են իրենց դասարանի մի մասնիկը:

«Ես հաճույքով եմ սովորում և ամեն օր ավելացնում եմ իմ գիտելիքների պաշարը» արտահայտությանը աշակերտների արձագանքները եղել են հետևյալը.

- 52, 6 %-ը նշել է «այո, դա այդպես է» արտահատությունը,
- 22, 6 %-ը՝ ավելի շատ այդպես է, քան հակառակը,
- 18, 3 %-ը՝ ոչ, դա այդքան էլ այդպես չէ,
- 6, 6 %-ը՝ ոչ, դա այդպես չէ:



Այս հարցի պատասխանները կիսվել են երկու մասի: Հարցվածների մի մասը նշել է դրական պատասխանը, սակայն մյուս բոլոր պատասխանները կամ բացասական են, կամ էլ դրան մոտ: Ուստի կա բավականին մեծ խնդիր այն առումով, որ աշակերների մեծ մասը գիտելիքների յուրացման, սովորելու հետ կապված խնդիրներ ունի: Ասել է թե, դպրոցի հիմնական գործառույթներից մեկը լիարժեք չի իրականացվում:

«Ես ինքս եմ կառավարում իմ ուսուցման գործընթացը, սովորում եմ ինքնուրույնության» արտահայտությանը աշակերտները արձագանքել են հետևյալ կերպ: Նրանց 57, 8 %-ը նշել է «այո, դա այդպես է», 18 %-ը նշել է «ոչ, դա այնքան էլ այդպես չէ», 13, 3 %-ը՝ նշել է «ավելի շատ այդպես է, քան հակառակը», 10, 9 %-ը՝ «ոչ, դա այդպես չէ»:



Ինչպես երևում է գծապատկերից, հարցված աշակերների մեծ մասը ինքնուրույն է

կառավարում իր ուսուցման գործընթացը: Սակայն կան աշակերտներ , ովքեր տվել են բացասական պատասխան: Ընդհանրապես, դպրոցներում աշակերտների ինքնուրույնության ձևավորման ուղղությամբ աշխատանքները շատ թերի են իրականացվում: Դպրոցի մանկավարժական գործընթացը ավելի շատ հենվում է պահանջների առաջադրման և ոչ թե սովորողների ուղղորդման ու նրանց ինքնուրույն աշխատանքների կառավարման իրականացման վրա: Սա կարևոր հետևություն է, որը պետք է գիտակցվի և շտկվի ուսուցիչների կողմից: Աշակերտի ինքնուրույն կարողությունների ձևավորումը առողջ կրթական միջավայրի ստեղծման գրավականներից մեկն է:

«Մեր դասարանում կան վարքի կանոններ, որոնց մշակմանը ես ինքս մասնակցել եմ» արտահայտությանը աշակերտները արձագանքել են այսպես: Նրանց 41, 7 %-ը նշել է «այո, դա այդպես է», 24, 4 %-ը նշել է «ոչ, դա այնքան էլ այդպես չէ», 22, 1 %-ը նշել է «ոչ, դա այդպես չէ», 11, 9 %-ը նշել է «ավելի շատ այդպես է, քան հակառակը:



Այս հարցի վերլուծությունը ցույց է տալիս, որ աշակերտները չեն ներգրավվում դասարանի կանոնների ստեղծման գործընթացի մեջ: Չի բացառվում, որ այդ կանոնները , եթե կան, ապա միայն պարտադրվում են աշակերտներին: Մտահոգիչ փաստ է, որը շատ մեծ տարածում ունի ժամանակակից դպրոցում:

Այսպիսով, կրթական միջավայրը ազդում է աշակերտների վրա ավելին, քան այն մեթոդաբանությունը, որը կիրառում են ուսուցիչները արդյունքի հասնելու համար: Ուստի, անհրաժեշտ է ստեղծել այնպիսի միջավայր, որը կձևավորի անձնային նշանակալի որակներ և բարենպաստ պայմաններ կապահովի սովորողների արդյունավետ ուսուցման և դաստիարակության համար:

Մեր կատարած ուսումնասիրությունը ցույց տվեց, որ այսօր դպրոցում իրականացվող

մանկավարժական գործընթացը ավելի շատ հենվում է պահանջների մեխանիկական առաջադրման, քան թե սովորողների ուղղորդման վրա: Դպրոցում ստեղծված կրթական միջավայրի նկատմամբ աշակերտների կողմից դժգոհությունները առկա են, երեխաների կողմից ուսուցիչներին տրված գնահատականները ցույց են տալիս, որ մասնավորապես միջին դպրոցում, ուսուցիչ-աշակերտ հարաբերությունները, նրանց համագործակցությունը բարելավման խիստ կարիք ունեն:ՈՒսումնասիրությունները փաստում են, որ սովորողների կեսը դժկամությամբ է դպրոց գնում, իրեն լավ չի զգում դպրոցում, նրանց համար կրթական միջավայրը բարենպաստ և անվտանգ չէ:Այս խմբի մոտ ցածր է ուսման նկատմամբ դրական վերաբերմունքն ու մոտիվացիան: Սովորողների 20 տոկոսից ավելին, տարբեր պատճառներով կաշկանդված և պասիվ է դասագործընթացում, ոչ մի կարծիք չի արտահայտում ու ոչ մի գործողության չի մասնակցում:Երեխաները նաև դժգոհ են մեծերի՝ ուսուցիչների և ծնողների ուշադրության և հոգատարության պակասից և նշում են, որ նրանք մտահոգված չեն իրենց կյանքով:

Մեր հարցախույզի արդյունքները հաստատեցին նաև մեր այն մտահոգությունը, որ մեզանում դեռևս չափազանց ցածր է երեխաների մասնակցությունը իրենց դպրոցական կյանքի կազմակերպմանը:Սովորողների մոտ թույլ է ձևավորված քննադատական մտածողությունը, սեփական կարծիք ունենալու և այն առանց վախենալու արտահայտելու սովորությունը:Ոչ բոլոր դպրոցներում և ընտանիքներում է դեռևս ձևավորվել երեխաների ձայնը լսելի դարձնելու մշակույթը , որի հետևանքով երեխաները լիարժեք չեն մասնակցում իրենց կյանքին, հատկապես դպրոցական կյանքին վերաբերող հարցերի որոշմանն ու լուծմանը: